

**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԱՄՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտար- կումների տեսակը	Հաճախականությունը	Միջինացված արդյունքը <sup>1</sup>
1	2	3	4	5	6
Մթնոլորտային օդ	Հանքավայրի տարածք	Ծծմբի երկօքսիդ Ազոտի երկօքսիդ	Նմուշարկում, նմուշների լաբորատոր վերլուծություն	Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ	0.004մգ/մ³ 0,017 մգ/մ³
Մակերևութային ջրեր	Նախատեսված չէ /Բացակայում են/				
Ստորգետնյա ջրեր	Նախատեսված չէ / Բացակայում են/				
Հողային ծածկույթ	Արտադրական հրապարակի տարածք	Քիմիական կազմ, նավթամթերքն երի պարունակությ ուն	Տարածքի դիտարկում	2024 թվականի ընթացքում մեկ անգամ	Նավթամթերքներ չեն հայտնաբերվել հողի քիմիական կազմում:
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	Նախատեսված չէ				
Աղմուկ և թրթռում	Նախատեսված չէ / Տեխնիկական համալրված է հատուկ ձայնախլացուցիչներով:/				
Ոչ վտանգավոր	Նախատեսված չէ				

<sup>1</sup>Մթնոլորտային օդում անօրգանական փոշու պարունակությունը (միջինացված ցուցանիշը) չի գերազանցում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ համաձայնեցված վնասակար արտանետումների ՍԹԱ նորմատիվների նախագծով սահմանված առավելագույն գումարային կոնցենտրացիաները

թափոններ	
Վառելանյութերի պահեստարաններ	Հանքավայրի տարածքում վառելանյութի պահեստարաններ չկան

1	2	3	4	5	6
Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապ- ված ենթակառուց- վածքներ	Հանքավայրի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան				
Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակ	Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգում				

Տեղեկատվությունը ներկայացրեց՝

<<Նարվաննա>> ՍՊԸ ՀՀ Արմավիրի մարզի Երվանդաշատի բազալտի հանքավայր, հեռ +37477335503, E-mail: [vardanarakeljan@mail.ru](mailto:vardanarakeljan@mail.ru)

Գտնվելու և գործունեության իրականացման վայրը, հոռախուր, կայքը, Էլեկտրոնային հասցեն՝ առկայության դեպքում

Ղեկավար

Պաշտոնը, անունը, ազգանունը



22.09.2025

ստորագրությունը, ամիսը, ամսաթիվը, տարեթիվը

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

*Հանքավայրի տեղադիրքը.* Երվանդաշատի բազալտի հանքավայրը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզում, Արմավիր քաղաքից 20 կմ արևմուտք: Այն տեղադրված է Երվանդաշատ յուղից 10կմ դեպի հարավ-արևելք 990-1025 մ բացարձակ նիշերի վրա և զբաղեցնում է մոտ 0.9հա տարածք, Արաքս ետի ձախափնյա լանջին:

### *Երկրաբանական կառուցվածքը.*

Երվանդաշատի հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են Արագածի հրաբխային հաստվածքի ստորին մասի դոլերիտային բազալտները, որոնք անմիջապես տեղադրված են միջին միոցենի կավային ապարների խարամացած մակերևույթի վրա: Բազալտային հոսքի ընդհանուր հզորությունը հանքավայրի սահմաններում տատանվում է 6.2 մ-ից 8.2 մ սահմաններում:

Բազալտային ծածկույթի մերձհատակային մասը ներկայացված է խարամացված բազալտներով: Այստեղ բազալտները տարածակոտկեն են, հաճախ խոռոչավոր, ուժեղ ճեղքավորված, մոխրաույն ու գորշ երանգներով: Վերջիններս հետախուզման սահմաններում ունեն 0.3 մ-ից 0.7 մ հզորություն:

Բազալտային հոսքի առաստաղային մասը խիստ ճեղքավորված է, ապարը խոռոչավոր է, մասամբ հողմահարված: Դրա հզորությունը տատանվում է 1.6-3.0 մետրի սահմաններում, կազմելով միջինը հանքավայրում 2.14 մ (փուշտաշերտ): Փուշտաշերտի հողմահարված բազալտները թարմ բազալտներից տարբերվում են միայն երկրորդային միներալների կավային խմբի միներալների և իդինզուիտի առկայությամբ:

Նկարաբովող հոսքի միջնամասը՝ օգտակար հաստվածքը, ներկայացված է միջին հատիկային, հիմնականում մանրածակոտկեն, հոծ-զանգվածային թարմ դոլերիտային բազալտներով, որոնք մոխրագույնից մինչև մուգ մոխրագույն են: Օտակար հաստվածքի առանձին մասերում բազալտները ներկայացված են խոշորածակոտկեն ու խոռոչավոր տարատեսակներով: Բազալտների միաձուլությունը խախտված է տարաբնույթ



տեղադրմամբ անջատման ճեղքերով, որոնց մեջ գերակշռում են հորիզոնականին ու ուղղաձիգին մոտ անկմամբ ճեղքերը:

Մանրադիտակի տակ բազալտների հիմնական զանվածն ունի դոլերիատային, բյուրեղային ստրուկտուրա: Վերջինս բաղկացած է հիմնային պլագիոկլազի (60 %) պրիզմաձև միկրոլիտներից և կլինոպիրոքսենի (15.0 %), օլիվինի (20-25 %) քսենոմորֆ հատիկներից և հանքային միներալից (մոտ 5.0 %): Առանձին բաղադրամասերի տեղադրման մեջ որևէ օրինաչափություն չի նկատվում: Ակցեսոր միներալներից ներկա է ապատիտը (1%):

Միներալները թարմ են, մասամբ փոփոխման են ենթարկվել օլիվինի հատիկները, առաջացնելով երկրորդական մաֆեոտիտ և իդինգսիտ:

Ապարը հիմնականում ներկայացված է կիսաբյուրեղային միկրոլիտային հիմնական զանվածով (90 %) կազմված հրաբխային ապակով կապակցված անկանոն տեղադրված մանր դաշտասպատային միկրոլիտներից, որում ներփակվում են թարմ պլագիոկլազի, պիրոքսենի ու օլիվինի հատիկները:

Օտակար հանածոյի մարմինը շերտաձև է, որը մեղմաթեք անկում է դեպի հարավ-արևմուտք: Օգտակար հաստվածքի հզորությունը տատանվում է 4.6-5.2 մ սահմաններում, միջինը կազմելով հետախուզման սահմաններում 4.9 մ:

Բազալտների հաստվածքը համատարած ծածկված է միջին-վերին չորրորդականի ավազակոպճալաքարային առաջացումներով, որոնք ներառում են կավավազային ենթաշերտեր: Նկատվում է դրանց հզորության աճ դեպի հյուսիս-արևելյան և արևելյան ուղղությամբ: Հետախուզման սահմաններում ավազակոպճալաքարային առաջացումների հզորությունը տատանվում է 0.4 մ-ից մինչև 4.8 մ սահմաններում (միջինը 1.58 մ):

Ժամանակակից դելյուվիալ-պրոյուվիալ նստվածքները, ներկայացված բազալտի բեկորներ պարունակող ավազակավերով նշվում են ձորակների ուղղությամբ, իսկ պաշարների հաշվարկման սահմաններում գործնականում բացակայում են:

Երկրաբանահետախուզական աշխատանքների տվյալները վկայում են, որ օգտակար հանածոն ներկայացված է մերձավերնությային շերտաձև մարմնով, որի սահմաններում բազալտների ճեղքավորվածության աստիճանը և դրանց ֆիզիկամեխանիկական հատկությունները բավական կայուն են:

#### *Հաստատված պաշարները.*

ՀՀ Արմավիրի մարզի Երվանդաշատի բազալտի հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ Էներգետիկ Ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի 2018 թվականի մարտի 1-ի թիվ 3 Եզրակացությամբ, 2017 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ, B +C<sub>1</sub> կարգերով, 42 600 մ<sup>3</sup> քանակով: Բլոկների ելքը 26.6%:

Հաստատված պաշարները դիտարկվել են երեսապատման բլոկների արտադրման համար հումք 9479-2011 ԴՕՇՏ, իսկ բլոկների արդյունահանման ընթացքում առաջացած թափոնները շինարարական խճի (8267-95 ՀՍՏ) և ավազի (8736-2014 ԴՕՇՏ) արտադրության համար:

#### *Հանքավայրի շահագործման լեռնատեխնիկական պայմանները.*

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների փոքր ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով:

Նշված պայմաններով կառուցված բացահանքը ունի հետևյալ պարամետրերը.

- Ամենամեծ երկարությունը - 185;
- Ամենամեծ լայնությունը - 76մ;
- Ամենամեծ խորությունը - 12.0մ:

Բացահանքի օտարման տարածքը - 0.91հա:

Բացահանքում ընդգրկված հաշվեկշռային (մարվող) պաշարները կազմում են 42600մ<sup>3</sup>, կորզվող բազալտները 39250մ<sup>3</sup>: Մակաբացման ապարները՝ 32.3հազ.մ<sup>3</sup>:



Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական մեկ կողանի մշակման համակարգ, որի տարրերն են՝

Հանքաստիճանի բարձրությունը – 2.5 մ;

Անվտանգության բերմայի լայնությունը – 1.0 մ;

Աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը –  $90^{\circ}$ ;

Աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը 18-20 մ:

Օգտակար հաստվածքի վերին մասը ծածկված է մակաբացման ապարներով: Մակաբացման ապարների միջին հզորությունը կազմում է 3.72 մ, որից 1.58 մ ներկայացված է փուխր ավազկոպձագլաքարային նստվածքներով, իսկ 2.14 մ-ը ուժեղ ճեղքավորված մասամբ հողմահարված բազալտներով:

Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից ընտրված է ներքին բուլդոզերային լցակույտաառաջացում:

#### *Շրջակա միջավայրի հակիրճ նկարագիրը.*

Երվանդաշատի բազալտի հանքավայրը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզում, Արմավիր քաղաքից 20 կմ արևմուտք: Այն տեղադրված է Երվանդաշատ գյուղից 10 կմ դեպի հարավ-արևելք 990-1025 մ բացարձակ նիշերի վրա և զբաղեցնում է մոտ 0.9 հա տարածք, Արաքս գետի ձախափնյա լանջին:

Շրջանի հիմնական ջրային զարկերակը հանդիսանում են Արաքս և Ախուրյան սահմանային գետերը, որոնցից առաջինը հոսում է հանքավայրի հարավային մասով: Շրջանում կան նաև մի շարք ոռոգման ջրանցքներ, ինչպես նաև չոր ձորեր և ձորակներ, որոնք լցվում են ջրով գարնանային ջրհոսքերի ժամանակ: Անտառային ծածկույթը շրջանում բացակայում է:

Շրջանի կլիման չոր է, ցամաքային, խիստ ձմռանով և տաք ամռանով: Օդի ջերմաստիճանը ամռանը հասնում է  $+40^{\circ}\text{C}$  –ի, իսկ ձմռանը մինչև  $-20-25^{\circ}\text{C}$ : Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է  $+6^{\circ}\text{C}$ -ից մինչև  $+15^{\circ}\text{C}$ : Տեղումների տարեկան միջին քանակը 300 մմ է:

Երվանդաշատի բազալտի հանքավայրի շրջանում զարգացած են գլխավորապես կիսաանապատային գորշ հողերը: Կիսաանապատային գորշ հողերը

գարգանում են խիստ ցամաքային, շոգ կլիմայի և կիսաանապատային բուսածածկույթի պայմաններում, կարբոնատներով և խճով հարուստ ավազակավերի և թեթև կավավազների վրա: Բնորոշվում են վերին հորիզոնի շերտավոր-թեփուկային, իսկ միջին հորիզոնում՝ անկայուն կնձկային ստրուկտուրայով: Իլյուվիալ-կարբոնատային հորիզոնի զգալի մասը խիստ ցեմենտացված է: Հողերն աչքի են ընկնում հումուսի փոքր քանակով (1-2%), միջին և ավելի փոքր կլանման ծավալով, թույլ հիմնային ռեակցիայով, քարքարոտությամբ և ուժեղ կարբոնատացվածությամբ: Հողերը հիմնականում ունեն սակավ հզորություն, միջին կավավազային (62%) մեխանիկական կազմ, ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48գ/սմ<sup>3</sup> սահմաններում, տեսակարար զանգվածը՝ 1.34-1.42գ/սմ<sup>3</sup>, ընդհանուր ծակոտկենությունը՝ 46-48%:

Երվանդաշատի բազալտի հանքավայրի շրջանի բուսական աշխարհը ներկայացված է Երևանյան ֆլորիստական շրջանի, ավազա-կավային մայրապարների վրա բաց և մուգ դարչնային հողերի վրա զարգացած չոր տափաստանային լանդշաֆտային գոտուն բնորոշ՝ անապատային և կիսաանապատային բուսականության տեսակներով: Այստեղ, համաձայն Ա. Մաղաքյանի հետազոտությունների, զբաղեցված է մոտ 130 բուսատեսակ, որոնցից որպես դոմինանտ կարելի է նշել հովվափողազգիների, աստղածաղիկազգիների, մեխակազգիների, թելուկազգիների, լոբազգիների, ֆրանկենազգիների, բորակաթուփազգիների, կարմրանազգիների և զուգատերևազգիների ընտանիքների ներկայացուցիչներին:

Հանքավայրի շրջանին բնորոշ բուսական աշխարհը ներկայացված է օշինդրա - էֆեմերային և հալոֆիլ, գիպսաֆիլ անապատային բուսատեսակներով:

Շրջանում կենդանական աշխարհի ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով:

Տարածքում տարածված են ցածր բարձրության (մինչև 1000մ ծովի մակերևույթից բարձր) հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Սակայն այստեղ հանդիպում է ն նաև արտազոնալ բնակավայրերին (քարաթափեր, ցանքեր, այգիներ, բնակավայրեր) բնորոշ տեսակներ: Համաձայն Ս. Դալի հրապարակված տվյալների, այս լանդշաֆտային զոնայում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ (որոնցից 82-ը՝ հանդիպում են նաև արտազոնալ բնակատեղերում), այդ



թվում՝ 28 (20) կաթնասուն, 67 (41)՝ թռչուն, 15 (8)՝ սողուն և 3 (3)՝ երկկենցաղ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով:

Սողունները և երկկենցաղները փոքրաքանակ են:

Հանքավայրի մոտակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

*Բնապահպանական միջոցառումների բնութագիր.* Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որի տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն,
- կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր,
- արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,
- դիզելային շարժիչով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների տեղադրում,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է ավտոճանապարհների պարբերաբար ջրում,
- կեղտաջրերի հավաքում հորատիպ գուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով,
- խախտված տարածքների ռեկուլտիվացիա, որի նպատակով կատարվում են հատկացումներ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին: